



«ՀԿ Կենտրոն» ԲՀԶ ՀԿ-ն ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «ՀԿ Ծառայություններ մատուցող կազմակերպությունները հանուն քաղաքացիական հասարակության զարգացման» ծրագրի շրջանակներում հրավիրում է անհատ փորձագետներին/դասընթացավարներին ներկայացնելու դասընթացներ վարելու ծառայությունների մատուցման վերաբերյալ հետաքրքրվածության հայտեր:

Ծրագիրը միտված է հզորացնելու տարածաշրջանային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կազմակերպչական կարողությունները, ապահովել կայունությունը և արդյունավետ համագործակցությունը՝ ծրագրի թիրախային մարզերի քաղաքացիական հասարակության, պետական և մասնավոր հատվածի կառույցների միջև միջոլորտային երկխոսության խթանման միջոցով: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Լոռի, Տավուշ և Շիրակ մարզերում:

Պահանջվում են դասընթացավարներ հետևյալ թեմաների համար՝

- «Ֆոնդահայթայթման ավանդական և այլընտրանքային մեթոդներ» թեմայով դասընթաց /2 օր՝ 10 ժամ /
- «Արտաքին կապերի ստեղծում, հաղորդակցման հմտություններ» թեմայով դասընթաց /2 օր՝ 5 ժամ/
- «ՀԿ անդամության և կամավորականության զարգացում» թեմայով դասընթաց /1 օր՝ 5 ժամ/
- «Համայնքային համախմբում և զարգացում» թեմայով դասընթաց /1 օր՝ 5 ժամ/
- «Սոցիալական ձեռնարկատիրության հիմունքներ» թեմայով դասընթաց /2 օր՝ 10 ժամ/
- «ՀԿ ֆինանսական պլանավորում, հաշվապահական հիմունքներ» թեմայով դասընթաց /1 օր՝ 5 ժամ/
- «Ցանցային աշխատանք և շահերի պաշտպանություն» թեմայով դասընթաց /2 օր՝ 10 ժամ/
- «Միջոլորտային հարաբերությունների ձևավորում. բանակցությունների արվեստ» թեմայով դասընթաց /2 օր՝ 10 ժամ/
- «Մարդկային ռեսուրսների կառավարում» թեմայով դասընթաց /2 օր՝ 10 ժամ/
- «ՏՀՏ հմտություններ, կիրառելի գործիքակազմ» թեմայով դասընթաց /1 օր՝ 5 ժամ/
- «Ծրագրերի նախագծում և կառավարում» թեմայով դասընթաց /2 օր՝ 10 ժամ/
- «Կարիքի գնահատում» թեմայով դասընթաց /2 օր՝ 10 ժամ/

Դասընթացավարի պարտականությունները՝

- Մշակել և ներկայացնել դասընթացի պլան՝ պատվիրատուի պահանջներին համապատասխան,
- Մշակել դասընթացի նախնական և հետդասընթացային գիտելիքի ստուգման հարցաշար
- Մշակել դասընթացի նյութերը (PowerPoint, գործնական վարժությունների նյութեր, մասնակիցներին բաժանվող նյութեր, օրակարգ) և տրամադրել դրանք պատվիրատուին դասընթացից առնվազն երեք օր շուտ,
- Մատուցել դասընթացը՝ պատվիրատուի հետ առնվազն 7 օր առաջ պայմանավորվելով

